ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 3196-Ա « 12 » օգոստոսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԵՆԺԵՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի 07.08.2025 թվականի №Ն/45299-25 զեկուցագիրը և «Snibe» ընկերության նամակ-հրավերը՝ «SnibeDay» միջազգային գործընկերության զարգացմանը և երկկողմ համագործակցության ընդլայնմանը միտված միջոցառմանը մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի օգոստոսի 21-ից 27-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շենժեն քաղաք՝ հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Հովհաննես Զոհրաբյան	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում առողջապահության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Արմինե Զոհրաբյանին:

4. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն գլխավոր տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի բացակայության ընթացքում «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն տնօրենի

պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Սեյրան Հովհաննիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246